ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2008 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևան 2007

Բովանդակություն

Ներածություն ..... էջ 3

I.Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը ..... էջ 3

II. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը ..... էջ 14

III. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները ..... էջ 17

IV. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար անհրաժեշտ այլ դրույթներ ..... էջ 17

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետև նաև՝ Հանձնաժողով) 2008 թվականի տարեկան գործունեության ծրագիրն (այսուհետև՝ Ծրագիր) ապահովում է Հանձնաժողովի 2002-2007 թվականների տարեկան գործունեության ծրագրերի շարունակականությունը և նպատակ ունի ծրագրավորվող տարվա ընթացքում ապրանքային շուկաներում պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը:

Ծրագիրն ամրագրում է Հանձնաժողովի լիազորությունների իրագործման նպատակները, խնդիրները և ապրանքային շուկաներում մրցակցության զարգացման գերակա ուղղությունները, ինչպես նաև ելնելով ապրանքային շուկայի առանձնահատկություններից, սահմանում է ուսումնասիրված ապրանքային շուկաներում մրցակցության զարգացման համար անհրաժեշտ միջոցառումները:

I. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը

Կայուն տնտեսական զարգացում ապահովելու համար անհրաժեշտ է տնտեսվարող սուբյեկտների միջև բարեխիղճ և արդյունավետ մրցակցային միջավայրի առկայությունը: Հանձնաժողովի կողմից տնտեսական մրցակցության իրավիճակը գնահատվել է ապրանքային շուկաների ուսումնասիրության, նախորդ տարիներին ուսումնասիրված շուկաներում դիտանցման, ինչպես նաև տեղեկատվության վերլուծության արդյունքում: Այսպես, Հանձնաժողովը 2006 թվականի հուլիսից մինչև 2007 թվականի սեպտեմբերը ուսումնասիրել է 11 ապրանքային շուկա (աղյուսակ 1) և դիտանցում է իրականացրել կենտրոնացված գրանցամատյանում գրանցված 80 ապրանքային շուկաներում (օգտագործելով գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից տրամադրված տվյալները), ինչպես նաև անդրադարձել է մի շարք ապրանքային շուկաներին, որոնցում նկատվել է տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքների իրացման միանման գների կիրառման քաղաքականություն:

Ապրանքային շուկաների մրցակցային իրավիճակի ուսումնասիրության արդյունքները

աղյուսակ 1

	Ապրանքային շուկայի անվանումը	Ուսումնասիրության ժամկետը	Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի առկայությունը (+) կամ բացակայությունը (-)	Ապրանքային շուկայի մասնակիցների թիվը	Համակենտրոնացման աստիճանը (CR-3)***	
					(%)	բնութագիրը
1	2	3	4	5	6	7
1	«Շաքարավազ»	2006թ. *	+	21	99.9	բարձր
		2004թ.	+	23	99.9	բարձր
2	«Խմորիչ հացաթխման համար»	2006թ.	+	13	84.2	բարձր
3	«Նրբերշիկ և սարդելկա»	2006թ.	-	48	63.2	միջին
		2004թ.	+	13	82.3	բարձր
4	«Կարագ»	2006թ.	+	24	68.4	միջին
		2004թ.	+	33	70.2	բարձր
5	«Արդյունահանված հանքային ջուր»	2006թ. *	+	6	98.9	բարձր
		2002թ.	+	1	100.0	բարձր
6	«Շշալցված աղբյուրի ջուր»	2006թ. *	+	5	97.4	բարձր
7	«Ամրալար»	2006թ	+	8	65.5	միջին
		2004թ.*	+	5	99.9	բարձր
8	«Ամրան»	2006թ	-	11	67.1	միջին
		2004թ. *	+	18	70.2	բարձր
9	«Քաղաքացիական և բնակարանային շինարարության մեջ օգտագործվող ապակի»**	2006թ	+	27	82.5	բարձր
		2004թ.	+;+	27	88.9	բարձր
10	«Բենզին»	2006թ	+	7	89.9	բարձր
		2004թ.	-	11	87.9	բարձր
11	«Դիզելային վառելիք»	2006թ	+	11	76.3	բարձր
		2004թ.	+	18	79.8	բարձր

* ուսումնասիրությունը իրականացվել է 1-ին կիսամյակի տվյալներով

** 2004 թվականին երկու գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ են գործել

*** Շուկան ունի համակենտրոնացման բարձր աստիճան, եթե 70% ≤ CR-3 ≤ 100%, միջին աստիճան, եթե 45% ≤ CR-3 < 70% ցածր աստիճան, եթե CR-3 < 45%: CR-3 տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսվարող սուբյեկտների բաժինների գումարն է:

Ներկայացված 11 ապրանքային շուկաներից ինում մրցակցային իրավիճակի փոփոխությունը որոշելու համար իրականացվել է կրկնակի ուսումնասիրություն և միայն երկուսը՝ «Խմորիչ հացաթխման համար» և «Շշալցված աղբյուրի ջուր» ապրանքային շուկաները, Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են առաջին անգամ: Նշված ինը շուկաներից 5-ը՝ «Շաքարավազ», «Արդյունահանված հանքային ջուր», «Քաղաքացիական և բնակարանային շինարարության մեջ օգտագործվող ապակի», «Բենզին» ու «Դիզելային վառելիք», շարունակում են մնալ բարձր կենտրոնացված: Ներկայումս վերոնշյալ բոլոր շուկաներում կան գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ: Նախորդ ուսումնասիրության ընթացքում «Բենզին» ապրանքային շուկայում, գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ չկար: Երեք՝ «Շաքարավազ», «Բենզին» և «Դիզելային վառելիք» շուկաներում տեղի է ունեցել մասնակիցների թվի նվազում: «Քաղաքացիական և բնակարանային շինարարության մեջ օգտագործվող ապակի» ապրանքային շուկայում մասնակիցների թիվը մնացել է անփոփոխ, իսկ «Արդյունահանված հանքային ջուր» ապրանքային շուկայում մասնակիցների թիվը ավելացել է 5-ով: Այնուամենայնիվ, այս ապրանքային շուկաներում համակենտրոնացման աստիճանը շարունակում է բավականին բարձր մնալ, ինչը խոսում է այդ ապրանքային շուկաներում մրցակցության հնարավոր սահմանափակման մասին: Հետևաբար, համակենտրոնացման մեծ աստիճան ունեցող այս շուկաներում հնարավոր չարաշահումները կանխարգելելու և

սահմանափակելու նպատակով ծրագրավորվող տարում դրանք կլինեն Հանձնաժողովի մշտական հսկողության տակ՝ դիտանցումներ իրականացնելու միջոցով:

Կրկնակի ուսումնասիրված մյուս 4 ապրանքային շուկաները ՝ «Նրբերշիկ և սարդելկա», «Կարագ», «Ամրալար», «Ամրան», եթե նախկինում եղել են բարձր կենտրոնացված, ապա այժմ միջին կենտրոնացված են, ինչը միանշանակ դրական փաստ է: Այս բոլոր շուկաներում էլ գործում էին գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ, սակայն ներկայումս գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ առկա են միայն «Կարագ» և «Ամրալար» ապրանքային շուկաներում: Այստեղ տեղի է ունեցել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի փոփոխություն, ընդ որում, «Ամրալար» ապրանքային շուկայում Հանձնաժողովը գերիշխող դիրք ունեցող է համարել երկու տնտեսվարող սուբյեկտի, որոնց ընդհանուր բաժինը գերազանցում էր ապրանքային շուկայի ծավալի 50 տոկոսը (համաձայն «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում կատարած լրամշակումների): «Նրբերշիկ և սարդելկա» և «Ամրալար» ապրանքային շուկաներում ավելացել է մասնակիցների թիվը համապատասխանաբար՝ 35-ով և 3-ով, և նվազել է համակենտրոնացման աստիճանը՝ 19.1 և 34.4 տոկոսային նիշով: Համակենտրոնացման աստիճանի նվազմանը անմիջականորեն նպաստել է մասնակիցների թվի կտրուկ աճի փաստը, համապատասխանաբար՝ 3.7 և 1.6 անգամ: «Ամրան» ապրանքային շուկայում մասնակիցների թիվը նվազել է 7-ով:

Հանձնաժողովի մշտական ուշադրության կենտրոնում է գտնվում կենտրոնացված գրանցամատյանում ընդգրկված գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը (իրացման ծավալը, գինը, ինքնարժեքը, ինքնարժեքի կառուցվածքը և դրանց փոփոխությունները յուրաքանչյուր կիսամյակի կտրվածքով): Այս գործընթացը թույլ է տալիս պարզել նաև գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների՝ ապրանքային շուկայի ծավալում դիրքի պահպանումը կամ փոփոխությունը, որի արդյունքում իրականացվում են այդ ապրանքային շուկաների կրկնակի ուսումնասիրություններ, մասնավորապես՝ վերը նշված 9 ապրանքային շուկաներում:

2007 թվականի հունվարի 1-ի դրությամբ կենտրոնացված գրանցամատյանում գրանցված գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից 2006 թվականի II կիսամյակի գործունեության վերաբերյալ ներկայացրած տեղեկատվության վերլուծության արդյունքում հայտնաբերվել են. ապրանքային շուկայում տնտեսվարող սուբյեկտի գերիշխող դիրքի կորուստ, ապրանքային շուկայում հնարավոր չհիմնավորված (արհեստական) գնի սահմանում, թերի կամ ոչ հավաստի տեղեկատվություն, «ստվերի» հնարավոր առկայություն և դրանցով պայմանավորված տեղում ստուգում անցկացնելու անհրաժեշտություն:

Ներկայացրած և Հանձնաժողովի տրամադրության տակ գտնվող այլ տեղեկատվության վերլուծության արդյունքում ուսումնասիրվել են մի շարք ապրանքային շուկաներ, որտեղ նկատվել է ապրանքների իրացման գների որոշակի աճի: Մասնավորապես, ապրանքների իրացման գների փոփոխություններ են արձանագրվել մսամթերքի, գարեջրի, հավի ձվի, շաքարավազի, կարագի, ցեմենտի և շինարարական այլ նյութերի, բենզինի, դիզելային վառելիքի, ինչպես նաև այլ ապրանքային շուկաներում:

Բացի այդ, նշված ապրանքային շուկաներում նկատվող՝ տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքների իրացման միանման գների կիրառումը կարող էր հիմք հանդիսանալ այդ շուկաներում ապրանքների իրացման գների վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների հնարավոր հակամրցակցային համաձայնությունների (համաձայնեցված գործողությունների կամ վարքագծի) մասին Հանձնաժողովի կողմից եզրակացություն տալու համար: Այսպիսի քաղաքականություն էր նկատվում ինչպես արտադրող կամ ներկրող տնտեսվարող սուբյեկտների միջև, այնպես էլ վերջիններիս և առևտրի օբյեկտների միջև: Մասնավորապես, առևտրի օբյեկտներում նկատվում էր հավի ձվի գների շարունակական աճ, ընդ որում, աճում էին ոչ միայն գերիշխող տնտեսվարող սուբյեկտի, այլև շուկայում գործող մյուս երկու առավել խոշոր արտադրող տնտեսվարող սուբյեկտների կողմից իրացվող ձվի գները: Տնտեսվարող սուբյեկտների կողմից միանման գների կիրառում էր նկատվում նաև գարեջրի, ցեմենտի, շինարարական այլ նյութերի և մի շարք այլ ապրանքային շուկաներում:

Տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացված տեղեկատվության վերլուծության արդյունքում «Հավի ձու՝ կճեպով» ապրանքային շուկայում գործող ընկերությունների կողմից ապրանքային շուկայում գների արհեստական բարձրացումը՝ համաձայնեցված գործողությունները (վարքագիծը), հանգեցրել էին այդ շուկայում մրցակցության սահմանափակմանը, ինչը Հանձնաժողովի կողմից որակվեց որպես հակամրցակցային համաձայնություն և կիրառվեց պատասխանատվության միջոց:

Հակամրցակցային համաձայնություններն իրենց բոլոր դրսևորումներով հանդիսանում են մրցակցության զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրից մեկը: Սակայն այդ խախտումները մինչև Օրենքի վերջին լրամշակումները դժվարությամբ էին բացահայտվում, իսկ առավել դժվար էր Հանձնաժողովի կողմից դրանց ապացուցումը:

Գործող Օրենքով (փոփոխություններով և լրացումներով) Հանձնաժողովը նպատակ է հետապնդել սահմանել հակամրցակցային համաձայնությունների բացահայտման այնպիսի չափանիշներ, որոնք թույլ կտան Հանձնաժողովին ավելի արդյունավետ աշխատել այդ ուղղությամբ:

Ոչ հավաստի տեղեկատվություն ներկայացնելու համար անհրաժեշտություն է առաջացել տեղում ստուգել (համաձայն «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում կատարված լրամշակումների) մի շարք ընկերությունների կողմից ներկայացված տվյալները:

Մրցակցային իրավիճակի գնահատման տեսանկյունից հատկանշական է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի տարեկան զեկույցի «Բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 25 ապրանքատեսակների ռեսուրսների» ցանկում ընդգրկված ապրանքային շուկաների ուսումնասիրությունը (աղյուսակ 2):

Սոցիալական մեծ նշանակություն ունեցող ապրանքային շուկաները

	Ապրանքային շուկայի անվանումը	Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի առկայությունը (+) կամ բացակայությունը (-)	Ապրանքային շուկայի մասնակիցների թիվը	Համակենտրոնացման աստիճանը (CR-3)	
				(%)	բնութագիրը
1	2	3	4	5	6
1	«Մակարոնեղեն»	-	101	49.7	միջին
2	«Բուսական յուղ (ձեթ)»	-	30	58.0	միջին
3	«Կենդանական յուղ (կարագ)»	+	24	68.4	միջին
4	«Շաքարավազ»	+	21	99.9	բարձր
5	«Պարենային ցորեն»	-	10	70.8	բարձր
6	«Ցորենի ալյուր»	-	62	72.2	բարձր
7	«Հավի ձու՝ կճեպով»	+	13	93.1	բարձր
8	«Պանիր աղաջրային»	-	46	26.2	ցածր
9	«Պանիր թարեքային (պինդ)»	-	36	55.2	միջին
10	«Պանիր հալած»	+	2	100.0	բարձր
11	«Պանիր փափուկ»	+	10	95.9	բարձր
12	«Կամրախայտ և իշխան ձկնատեսակներ»	+	36	53.2	միջին
13	«Սառեցրած ձկներ»	+	4	99.8	բարձր
14	«Սուրճ»	+	54	73.9	բարձր
15	«Գինի»	-	18	54.5	միջին
16	«Էթիլային սպիրտ»	+	21	95.7	բարձր
17	«Օղի»	-	13	48.6	միջին
18	«Ծխախոտ ֆիլտրով»	+	13	90.8	բարձր
19	«Ծխախոտ առանց ֆիլտրի»	+	6	99.6	բարձր
20	«Բենզին»	+	7	89.9	բարձր
21	«Դիզելային վառելիք»	+	11	76.3	բարձր

Բնակչության կողմից ապրանքների սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 25 ապրանքատեսակների ռեսուրսների ցանկից ուսումնասիրված է 21 ապրանքային շուկա՝ որոնցից 13-ը (61.9 տոկոսը)՝ բարձր կենտրոնացված շուկաներ են, 7-ը (33.3 տոկոսը)՝ միջին կենտրոնացված են և միայն 1-ը (4,8 տոկոսը)՝ ցածր կենտրոնացված: Ընդ որում, այս շուկաներից 13-ում առկա են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ: Հատկանշական է նաև, որ գերազանցապես ներմուծման հաշվին գործող շուկաներում և տեղական արտադրության ապրանքներով գերակշիռ ծավալների հաշվին գործող շուկաներում պատկերը բացառապես նույնն է: Այստեղ բարձր կենտրոնացված շուկաները կազմում են 75 տոկոսը, 25 տոկոսը միջին կենտրոնացված են և չկան ցածր կենտրոնացված շուկաներ: Միաժամանակ, տեղական արտադրության ապրանքներով գերակշիռ ծավալների հաշվին գործող բոլոր շուկաներում առկա են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ, իսկ գերազանցապես ներմուծման հաշվին գործող շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ կան 6 շուկաներում (75 տոկոս):

Մրցակցության տեսանկյունից «ամենաազատականները» ինչպես ներմուծվող, այնպես էլ տեղական արտադրության ապրանքների հաշվին գործող շուկաներն են, որոնցից բարձր և միջին կենտրոնացված շուկաները համապատասխանաբար 9-ը և 4-ն են և հավասարապես կազմում են 44.4 տոկոս, և մեկը՝ (11.1տոկոս) ցածր կենտրոնացված շուկա է: Վերոնշյալ ապրանքային շուկաներից միայն երեքում կան գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ:

Արդյունավետ տնտեսական մրցակցությունը սովորաբար ենթադրում է ապրանքային շուկայի մասնակիցների մեծ թիվ: Գծանկարներում (1, 2, 3,) ներկայացված են ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակը բնութագրող մի շարք ցուցանիշներ՝ կախված տնտեսվարող սուբյեկտների թվից: Ցուցանիշները հաշվարկվել են 28 ապրանքային շուկաների* տվյալներով, որտեղ մասնակիցների թիվը 30-ից ավելին է: Որպես կանոն, որքան մեծ է տնտեսվարող սուբյեկտների թիվը ապրանքային շուկաներում, այնքան ցածր է համակենտրոնացման աստիճանը և քիչ են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտները:

* տեղական արտադրության ապրանքներով գերակշիռ ծավալների հաշվին գործող շուկաներ («Ցորենի ալյուր», «Մսամթերք», «Պանիր թարեքային (պինդ)», «Թթվասեր», «Օղի», «Պանիր աղաջրային», «Նրբերշիկ և սարդելկա», «Երշիկեղեն», «Կարմրախայտ և իշխան ձկնատեսակներ», «Մակարոնեղեն», «Շոկոլադ և շոկոլադե արտադրանք», «Գազավորված, քաղցրացված ըմպելիք», «Ասֆալտապատում»),

ներմուծման հաշվին գործող շուկաներ («Բուսական յուղ (ձեթ)», «Թեյ», «Լվացքի փոշի (ձեռքի լվացքի համար)», «Լվացքի փոշի (լվացքի մեքենայի համար)», «Սպասք լվանալու միջոցներ», «Ձեռքի օճառ», «Հարթ գլանվածք», «Անկյունակ, պրոֆիլներ», «Սուրճ», «Կարագ», «Մարդատար ավտոմեքենաների նոր անվադողեր», «Շինարարական նպատակով օգտագործվող յուղաներկեր», «Շինարարական նպատակով օգտագործվող ջրաներկեր», «Շինարարական նպատակով օգտագործվող լաքեր», «Շամպուն»)

Ապրանքային շուկաների խմբավորումն ըստ կենտրոնացվածության աստիճանի

գծանկար 1



Ապրանքային շուկաների խմբավորումն ըստ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների
առկայության (բացակայության)

գծանկար 2



Ապրանքային շուկաների խմբավորումն ըստ շուկայի մասնակիցների թվի

գծանկար 3



Ապրանքային շուկաներում բարձր կենտրոնացվածության առկայության բացասական ազդեցության թուլացման համար էական նշանակություն ունի փոքր և միջին ձեռնարկություններին պետական աջակցությունը, որն ապահովում է տնտեսության մեջ կայուն վերարտադրությունը և մրցակցության զարգացումը:

Փոքր ձեռնարկատիրության զարգացումը շուկայական հարաբերությունների և մրցակցության պայմաններում օբյեկտիվորեն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ տեղի ունեցող բարեփոխումների և նոր տնտեսական կառուցվածքների ձևավորման հիմնական ուղղություններից մեկը:

Այդ առումով Հանձնաժողովի խնդիրներից է նաև շուկայի մուտքի խոչընդոտների բացահայտումը, այսինքն, ցանկացած հանգամանք, որը խանգարում է նոր տնտեսվարող սուբյեկտներին հավասար մրցակցել տվյալ ապրանքային շուկայում արդեն գործող սուբյեկտների հետ:

Հանձնաժողովը նախկինում ուսումնասիրել է նաև 40 ապրանքային շուկա՝ գյուղատնտեսական արտադրանքի և սննդի արդյունաբերության ոլորտում, 14 ապրանքային շուկա՝ արդյունաբերության ոլորտում և 12 ապրանքային շուկա՝ շինարարության և շինարարական նյութերի ոլորտում (աղյուսակ 3):

Մի շարք ոլորտներում ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը, ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների առկայությունը

աղյուսակ 3

N	Ոլորտի անվանումը	Ապրանքային շուկաների թիվը	Ապրանքային շուկաների թիվը, որտեղ գործում են գերիշխող դիրք ունեցող սուբյեկտներ (%)	Բարձր կենտրոնացված ապրանքային շուկաներ (%)	Միջին կենտրոնացված ապրանքային շուկաներ (%)	Ցածր կենտրոնացված ապրանքային շուկաներ (%)
1	2	3	4	5	6	7
1	Գյուղատնտեսական արտադրանք և սննդի արդյունաբերություն	40	67.5	60.0	35.0	5.0
2	Արդյունաբերություն	14	50.0	28.6	42.9	28.6
3	Շինարարություն և շինարարական նյութեր	12	50.0	50.0	16.7	33.3
4	Ընդամենը այս ոլորտներում	66	60.6	51.5	33.2	15.2

Այս շուկաներից 34-ը բարձր կենտրոնացված են, 22-ը՝ միջին կենտրոնացված և միայն 10-ը՝ ցածր կենտրոնացված են: Միաժամանակ, համակենտրոնացման աստիճաններն ըստ ոլորտների տարբերվում են և վկայում են մրցակցության տարբեր աստիճանների մասին: Այսպես, գյուղատնտեսական արտադրանքի և սննդի արդյունաբերության շուկաներից 24-ը բարձր կենտրոնացված են, 14-ը՝ միջին և միայն 2-ը՝ ցածր: Շինարարության և շինարարական նյութերի շուկաներից 6-ը բարձր կենտրոնացված են, 2-ը՝ միջին և 4-ը՝ ցածր: Այս երեք ոլորտներից ամենաարդյունավետ մրցակցությունը նկատվում է արդյունաբերության ոլորտի շուկաներում, որտեղ բարձր և ցածր կենտրոնացված են 4-ական շուկաներ, 6-ը՝ միջին կենտրոնացված են:

Տնտեսական մրցակցության միջավայրի վերլուծության հիմնախնդիրներից է մնում թերի և ոչ լիարժեք ներկայացվող տեղեկատվությունը: Այսպիսի տեղեկատվությունը դժվարություններ է առաջացնում և խոչընդոտ հանդիսանում ապրանքային շուկաների ծավալները հաշվարկելիս, տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը ուսումնասիրելիս և գնահատելիս: Ինչի արդյունքում մրցակցության պաշտպանությանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը նվազում է, դժվարանում է ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակների կարգավորման եղանակների ճիշտ ընտրությունը:

Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնելիս հանդիպում է մի շարք խնդիրների, որոնք կապված են ներկայացվող տեղեկատվության հավաստիության հետ: Հարկ է նշել նաև, որ այդ աշխատանքներն իրականացվում են պաշտոնական և մատչելի տեղեկության հիման վրա, որը ոչ միշտ է արտացոլում շուկայի իրական պատկերը: Հատկապես, ագրոպարենային համալիրի ոլորտի ապրանքային շուկաների ուսումնասիրության ընթացքում Հանձնաժողովը հանդիպում է տեղեկատվական բնույթի դժվարությունների (հիմնախնդիրների), տեղեկատվության հավաստիության (օբյեկտիվության) տեսանկյունից: Մի դեպքում հիմնախնդիրը կապված է պետական մարմիններից ստացված տվյալների, իսկ մյուս դեպքերում՝ «ստվերային» տնտեսության առկայության հետ:

Նման օրինակ է «Կարագ» ու «Նրբերշիկ և սարդելկա» ապրանքային շուկաների վերաբերյալ ներկայացված ծավալները, որոնք չեն արտացոլում իրական պատկերը: Եթե 2004

թվականի տվյալներով Հանձնաժողովի կողմից շուկայի ուսումնասիրության արդյունքում մեկ շնչի հաշվով սպառումը տարվա կտրվածքով կազմում էր 1.3 կգ կարագ և 0.8 կգ նրբերշիկ և սարդելկա, ապա 2006 թվականի տվյալներով ուսումնասիրության արդյունքում այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են՝ 0,9 կգ և 0,9 կգ: Մեկ շնչի հաշվով այսպիսի ցուցանիշները չեն կարող իրական լինել, անգամ բնակչության ցածր գնողունակության պայմաններում: Ընդ որում, կասկած է հարուցում վերջին տարիներին կարագի ներմուծման ծավալների մասին տեղեկատվությունը: Այսպես, եթե 2004 թվականին հանրապետություն, ըստ ներկայացված տվյալների, ներմուծվել էր 5036.2 տոննա կարագ, ապա 2006 թվականին՝ միայն 2662.0 տոննա, և սա այն դեպքում, որ հանրապետությունում կարագի արտադրությունը աննշան է:

Արդյունավետ մրցակցության համար բարենպաստ շուկայական կառուցվածքն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Մինչ այժմ ուուսումնասիրված ապրանքային շուկաներում մրցակցության զարգացմանը խոչընդոտող հիմնական խնդիրներն են հանդիսացել անբարեխիղճ մրցակցությունը և տնտեսության «ստվերայնությունը»:

Անբարեխիղճ մրցակցությունը դրսևորվում է, մասնավորապես, ճանաչում ունեցող և սպառողների մոտ պահանջարկ վայելող հանրահայտ ապրանքային նշանների և անվանումների կրկնօրինակմամբ ու շփոթության աստիճանի նմանեցմամբ, ինչպես նաև մակնշման մեջ անհրաժեշտ տեղեկությունների անճշտությամբ կամ բացակայությամբ: Անբարեխիղճ մրցակցության այսպիսի դրսևորումները բնորոշ են լայն սպառում ունեցող ապրանքների շրջանառության ոլորտներին: Անբարեխիղճ մրցակցության փաստեր են արձանագրվել «Բուսական յուղ (ձեթ)», «Օղի», «Սուրճ», «Կոնյակ» ապրանքային շուկաներում և հեռուստատեսային գովազդային հոլովակներում, որոնք հանգեցրել են նշված ապրանքատեսակի վերաբերյալ թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման)՝ հասարակության մոլորեցման:

Անբարեխիղճ մրցակցության կանոնակարգման խնդիրներից է նաև որոշ դեպքերում տնտեսվարող սուբյեկտների կողմից Հանձնաժողովի որոշմամբ ամրագրված անբարեխիղճ մրցակցության գործողությունները շարունակելու երևույթները:

Տնտեսական մրցակցության օրենսդրության համաձայն, ապրանքային շուկայում տնտեսվարող սուբյեկտների գերիշխող դիրք ունենալը չի համարվում օրենսդրության խախտում: Վարչական պատասխանատվության են ենթարկվում միայն այն ընկերությունները, որոնք չարաշահում են իրենց գերիշխող դիրքը՝ ի վնաս մրցակիցների: Գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից տարբեր տիպի չարաշահումների հայտնաբերումը և վերացումը հանդիսանում է Հանձնաժողովի կարևոր խնդիրներից մեկը և 2007 թվականին մինչև սեպտեմբերի 1-ը Հանձնաժողովը հայտնաբերել և համապատասխան որոշումներ է կայացրել գերիշխող դիրք ունեցող երեք սուբյեկտների վերաբերյալ:

Հատկանշական է, որ դրանք հիմնականում տարեկան իրացման մեծ ծավալ ունեցող շուկաներ են, իսկ որոշ շուկաներում իրացմանը ծավալը կազմում է 10-30 մլդ. և ավելի դրամ:

Ընդ որում, անհրաժեշտ է նշել, որ մրցակցային վիճահարույց խնդիրների լուծման գործընթացում տնտեսվարող սուբյեկտների շրջանում արձանագրվել է տեղաշարժ և առաջընթաց. ընկերությունները վիճահարույց խնդիրներով ավելի հաճախ են սկսել դիմել Հանձնաժողով:

Հանձնաժողովի խնդիրներից մեկն է հանդիսանում նաև ապրանքային շուկաներում համակենտրոնացման վերահսկումը, որին մինչ այժմ Հանձնաժողովը քիչ է անդրադարձել՝ դիմումների, համապատասխան տեղեկատվական բազայի բացակայության և օրենսդրության տարաբնույթ մեկնաբանության պատճառով: Օրենքի նոր լրացումներում և փոփոխություններում հաշվի են առնվել Հայաստանի տնտեսության զարգացման միտումները, այդ թվում՝ շուկայում համակենտրոնացման գործընթացների ակտիվացումը:

Մոնոպոլիզացիայի կանխարգելման լավագույն ձևը կանխարգելման միջոցառումների կիրառումն է, այսինքն՝ խոշոր գործարքների նախնական վերահսկումը, որոնք կարող են հանգեցնել մրցակցային միջավայրի, ինչպես նաև ապրանքային շուկաներում մրցակցության պայմանների փոփոխման:

Նոր Օրենքով Հանձնաժողովին վերապահվում է նաև արգելված պետական օժանդակության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նոր գործառույթ: Այդ կապակցությամբ Հանձնաժողովը 2008 թվականին ծրագրում է իր իրավասությունների շրջանակներում զբաղվել այդ խնդրով՝ Հանձնաժողով ներկայացվող նախագծերի փորձաքննության ճանապարհով:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը, որը կարող է սահմանափակել մրցակցությունը, գտնվում է Հանձնաժողովի տեսադաշտում: Սակայն Հանձնաժողովն ունի խնդիրներ տեղական ինքնակառավարման մարմինների այն գործողությունների հետ, որոնք կարող են ուղղված լինել ապրանքային շուկաներում մրցակցության սահմանափակմանը: Եթե առաջին դեպքում Հանձնաժողովը կարող է կիրառել նախազգուշացնող միջոցներ (տեղեկատվության հասանելիության պարագայում), ապա երկրորդ դեպքում Հանձնաժողովի արձագանքը կարող է լինել միայն արդեն տեղի ունեցած փաստերի մասին ներկայացված դիմում-բողոքների հիման վրա:

Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է Օրենքի նոր խմբագրության պայմաններում, որն էապես արդիականացրել է տնտեսական մրցակցության պաշտպանության այնպիսի կարևոր մեխանիզմներ, ինչպիսիք են տնտեսվարող սուբյեկտների համաձայնեցված գործողությունների սահմանումը և հսկողությունը, տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման հայտնաբերումը, տնտեսվարող սուբյեկտին որպես գերիշխող դիրք ունեցող ճանաչումը և այլ գործառույթներ: Միաժամանակ, այն հնարավորություն է ընձեռում տեղում ստուգումներ իրականացնելու, ինչը մեծապես կնպաստի իրավախախտումների հայտնաբերմանը:

II. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը

Հանձնաժողովը, հիմք ընդունելով սույն Ծրագրի առաջին գլխում ներկայացված տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և բացահայտված հիմնախնդիրները, ինչպես նաև հաշվի առնելով նախորդ տարիներին տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում կուտակած փորձը, 2008 թվականին ծրագրում է իրականացնել տնտեսական մրցակցության քաղաքականությունը՝ հետևյալ ուղղություններով.

1. ապրանքային շուկաների տնտեսական մրցակցության իրավիճակի գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ընդլայնում,
2. մրցակցությունը սահմանափակող, կանխող կամ արգելող հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերում,
3. ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրում և հնարավոր չարաշահումների հայտնաբերում,
4. համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողություն,
5. անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտում,
6. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման ապահովում,
7. ապրանքային շուկաների մուտքի խոչընդոտների հայտնաբերում և շուկայի հասանելիության ապահովում,
8. տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված տեղեկատվության արժանահավատության, տնտեսվարող սուբյեկտի փաստացի գործունեության բացահայտում,
9. զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին, տնտեսվարող սուբյեկտների դիմումներին օպերատիվ արձագանքում,
10. պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից Օրենքին հակասող գործողությունների բացահայտում և դադարեցում,
11. արգելվող պետական օժանդակության հայտնաբերում,
12. հասարակության տեղեկացվածության բարձրացում,
13. տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության լրամշակում:

Նշված ուղղությունների իրականացման ապահովման նպատակով Հանձնաժողովը 2008 թվականին նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

Աղյուսակ 4

h/h	Միջոցառում	Ժամկետ
1.	*Տեղեկատվական բազայի ընդլայնում*	
	տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծություն՝ բնակչության կողմից սպառման կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքների ապրանքային շուկաներում,	տարվա ընթացքում
	ուսումնասիրված ապրանքային շուկաներում տնտեսական մրցակցության իրավիճակի շարունակական դիտանցում և գնահատում:	
2.	*Հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերում*	
	իրացման կամ ձեռքբերման խտրական և (կամ) տարբերակված գների հայտնաբերմանն ուղղված դիտանցում և գնահատում,	տարվա ընթացքում

	ապրանքի գնի չհիմնավորված բարձրացման, իջեցման կամ պահպանման բացահայտմանն ուղղված դիտանցում և գնահատում,	
	միևնույն ապրանքային շուկայի որոշակի տարածքներում, որոշակի ծավալներով, տեսականիով, սպառողների կամ մատակարարների խմբերով ապրանքների շրջանառության սահմանափակման դեպքերի ուսումնասիրություն,	
	համաձայնեցված գործողությունների արդյունքում տնտեսվարող սուբյեկտների կողմից շուկայի մուտքի խոչընդոտների կամ շուկայից տնտեսվարող սուբյեկտներին դուրս մղելու փաստերի և այլ գործողությունների բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն:	
3.	*<u>Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրում և հնարավոր չարաշահումների հայտնաբերում</u>*	
	իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված, խտրական և (կամ) տարբերակված գների սահմանման կամ կիրառման կամ օրենսդրությանը հակասող առևտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրման դեպքերի հայտնաբերում,	տարվա ընթացքում
	առանձին գործընկերների նկատմամբ խտրական պայմանների, լրացուցիչ պարտավորությունների պարտադրման դեպքերի հայտնաբերում,	
	գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից այլ գործողությունների բացահայտում, որոնք հանգեցնում են այլ տնտեսվարող սուբյեկտի շուկա մուտք գործելու խոչընդոտների (շուկա մուտք գործելը սահմանափակելու) կամ շուկայից նրան դուրս մղելուն:	
4.	*Համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողություն*	
	տնտեսվարող սուբյեկտների միացումների կամ միաձուլումների, մեկ տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի ակտիվների կամ փայաբաժնի ձեռքբերման, ինչպես նաև մեկ այլ տնտեսվարող սուբյեկտի որոշումների կայացման կամ մրցունակության վրա ազդելու վերաբերյալ տեղեկատվության ստացում:	տարվա ընթացքում
5.	*Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտում*	
	անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման նպատակով գովազդի ոլորտում մշտական դիտանցում,	տարվա ընթացքում
	քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների դիմումների, ՁԼՄ հրապարակումների հիման վրա ուսումնասիրությունների իրականացում,	
	անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման ուղղությամբ աշխատանքների իրականացում:	
6.	*Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման ապահովում*	
	Հանձնաժողովի գործունեությունը կանոնակարգող օրենքների, ենթաօրենսդրական ակտերի և մրցակցային քաղաքականության կիրարկման ուղղությամբ պարզաբանման աշխատանքների իրականացում	տարվա ընթացքում
	Հանձնաժողովի որոշմամբ դադարեցման ենթակա գործողությունների հայտնաբերման ուղղությամբ աշխատանքների իրականացում:	
7.	*Ապրանքային շուկաների մուտքի խոչընդոտների հայտնաբերում, շուկայի հասանելիության ապահովում*	
	պետական կառավարման մարմինների կողմից ընդունված տնտեսական մրցակցության խնդիրներին առնչվող որոշումների դիտանցում,	տարվա ընթացքում
	տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված տնտեսական մրցակցության խնդիրներին առնչվող ակտերի ուսումնասիրություն,	

	Օրենքով վերապահված լիազորությունների իրականացման ընթացքում պետական կառավարման մարմինների կողմից ստեղծվող խոչընդոտների ուսումնասիրություն:	
8.	*Տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված տեղեկատվության արժանահավատության, տնտեսվարող սուբյեկտի փաստացի գործունեության բացահայտում*	
	Օրենքով սահմանված կարգով հետազոտության, ստուգման, ուսումնասիրության և (կամ) դիտանցման իրականացում:	
9.	*ՁԼՄ հրապարակումներին, տնտեսվարող սուբյեկտների դիմումներին օպերատիվ արձագանքում*	տարվա ընթացքում
10.	*Պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից Օրենքին հակասող գործողությունների բացահայտում և դադարեցում*	
	պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից Օրենքին հակասող գործողությունների վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների դիմումների ուսումնասիրություն,	տարվա ընթացքում
	Օրենքին հակասող գործողությունները դադարեցնելու միջնորդությամբ դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանը,	
	Օրենքի խախտման համար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառում:	
11.	*Տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանն ուղղված պետական օժանդակության հայտնաբերումը*	տարվա ընթացքում
12.	*Հասարակության տեղեկացվածության բարձրացում*	
	զանգվածային լրատվության միջոցներով Հանձնաժողովի աշխատանքների պարբերական լուսաբանում,	տարվա ընթացքում
	տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ հրապարակային բացատրական աշխատանքների իրականացում,	
	զանգվածային լրատվության միջոցներով Օրենքի դրույթների մեկնաբանությունների ներկայացում,	
	ինտերնետային ցանցում on–line ռեժիմով դիմումներին և բողոքներին արձագանքում	
13.	*Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության լրամշակումներ*	
	Օրենսդրական դաշտի բարելավում,	տարվա ընթացքում
	Օրենքի դրույթների կիրարկումն ապահովող համապատասխան նորմատիվային բազայի կատարելագործում,	
	Եվրոպական մրցակցային օրենսդրության հետ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության ներդաշնակեցման հետ կապված գործողությունների իրականացում:	

Հանձնաժողովի կողմից նշված միջոցառումներն իրականացվելու են հիմնականում Հանձնաժողովի տրամադրության տակ առկա տեղեկատվության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, տնտեսվարող սուբյեկտների հարցադրումների, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա:

III. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները

Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով, բացի օրենսդրությամբ ամրագրված գործառույթներից, Ծրագիրն իրականացվում է նաև մրցակցության կարգավորման հետևյալ մեխանիզմների կիրառմամբ.

1. Ապրանքային շուկաներում Օրենքի դրույթների խախտումների վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների կողմից Հանձնաժողովին դիմելու նպաստավոր պայմանների և վստահության մթնոլորտի ձևավորում՝ Օրենքի խախտումների վերաբերյալ ստացված դիմումներին, ահազանգերին, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին օպերատիվ արձագանքման միջոցով:

2. Օրենքի խախտման համար պատասխանատվության միջոցների կիրառման անխուսափելիության մթնոլորտի ձևավորում:

3. Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տնտեսական մրցակցության հարցերին առնչվող՝ ընդունված իրավական ակտերի վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունների ներկայացում:

4. Համագործակցություն՝

- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ,
- համապատասխան հասարարական և միջազգային կազմակերպությունների հետ, որոնց նպատակն է տնտեսական մրցակցության բարենպաստ միջավայրի ձևավորումը:

5. Հանձնաժողովի գործունեության թափանցիկության ապահովում՝ պաշտոնական տեղեկագրերի հրատարակման, պաշտոնական ինտերնետային կայքի սպասարկման, մամուլի ասուլիսների, ՁԼՄ-ների հետ համագործակցության, Օրենքի դրույթների, դրանց խախտման հետևանքների, Հանձնաժողովի իրավասությունների և գործառույթների, քննարկվող հարցերի, ընդունվող որոշումների, իրականացվող ծրագրային և օպերատիվ ուսումնասիրությունների, դրանց արդյունքների վերաբերյալ հասարակության իրազեկման միջոցով:

6. Դատավորների ու դատական համակարգի ծառայողների տեղեկացվածության բարձրացում՝ միջազգային փորձագետների և Հանձնաժողովի համապատասխան մասնագետների մասնակցությամբ մրցակցային քաղաքականության իրականացման վերաբերյալ կազմակերպվող սեմինարների միջոցով՝ նվիրված օտարերկրյա (առանձնապես՝ եվրոպական) պետություններում մրցակցային գործերի քննության կարգին և ձևավորված պրակտիկային:

IV. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար Հանձնաժողովի կողմից սահմանված անհրաժեշտ այլ դրույթներ

Ծրագրավորվող տարում, ելնելով Հանձնաժողովի մանդատի մասին հանրության իրազեկության ընդլայնման նկատառումից և նրա գործունեության հանդեպ վստահությունը բարձրացնելու նպատակով, ամրապնդվելու է համագործակցությունը հասարակական, ոչ կառավարական կազմակերպությունների, ակադեմիական հաստատությունների և միությունների հետ:

Միաժամանակ, ելնելով տնտեսական մրցակցության հարցերի հանդեպ տեղեկացվածության աստիճանի բարձրացման և փոքր ու միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) գործունեության զարգացմանն աջակցման անհրաժեշտությունից, նախատեսվում է համագործակցել ՓՄՁ խնդիրներով զբաղվող կազմակերպությունների, ՀՀ

առևտրաարդյունաբերական պալատի և օտարերկրյա ներդրումների և համագործակցության ասոցիացիայի, ինչպես նաև ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի հետ: Այն կնպաստի տեղեկատվության փոխադարձ փոխանակմանը, մրցակցության օրենսդրության հնարավոր խախտումների վերաբերյալ քննարկումների, կլոր սեղանների և սեմինարների կազմակերպմանը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՓՄՁ սուբյեկտների նկատմամբ կիրառվող վարչական խոչընդոտների դրսևորումների հայտնաբերմանը, ինչպես նաև վերջիններիս պետական աջակցությանն ու ոլորտի զարգացմանն ուղղված խնդիրների բացահայտմանը:

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովն իր խնդիրներից է համարում միջազգային փորձի ուսումնասիրության և ներդրման, աշխատակազմի ուսուցման ու վերապատրաստման, ինչպես նաև փորձի փոխանակման աշխատանքների կազմակերպումը:

Բազմակողմ համագործակցության շրջանակներում Հանձնաժողովն ակտիվ մասնակցում է ԱՊՀ անդամ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի (այսուհետև՝ Խորհուրդ) ընթացիկ աշխատանքներին, տարեկան նիստերին և հանդիպումներին, որոնց արդյունքում նախագծվում և հաստատվում են մրցակցության քաղաքականության կիրարկման և օրենսդրության առումով համատեղ գործողությունների շրջանակները: Ծրագրային տարում Հանձնաժողովն իր իրավասության շրջանակներում շարունակելու է պարբերաբար մասնակցել Խորհրդի աշխատանքներին, ներկայացնել և պաշտպանել Հայաստանի Հանրապետության դիրքորոշումները տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնարար խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև շարունակել իրականացնել որոշ ապրանքային կամ ծառայությունների շուկաների համատեղ ուսումնասիրություններ:

Միջազգային մրցակցության ցանց (ICN) կազմակերպությանն անդամակցության շրջանակներում անդամ պետությունների հետ Հանձնաժողովը շարունակելու է համատեղ մասնակցել ICN-ի Աշխատանքային խմբերի ընթացիկ գործունեությանը և տարեկան համաժողովներին, ինչը հնարավորություն է ընձեռում խթանել Հայաստանի և զարգացած ու զարգացող արտերկրների տնտեսական մրցակցության օրենսդրությունների մոտարկման գործընթացը, տնտեսական մրցակցության ոլորտում միջազգային զարգացման տեսանկյունից անմիջական մասնակցություն ունենալ ծագած խնդիրների վերաբերյալ որոշումների կայացմանը, ինչպես նաև արտերկրների հանրությանը տեղեկացնել տնտեսական մրցակցության զարգացման խնդրում Հանձնաժողովի ձեռքբերումներին:

Եվրոպական քաղաքականության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով մրցակցության քաղաքականության կիրարկման գործընթացում զգալի տեղ է գրավում «համապատասխանեցումը ԵՄ սկզբունքներին», և համագործակցության ուղղություններից է ԵՄ չափորոշիչներին համապատասխան տնտեսական մրցակցության կանոնների մոտարկման և համապատասխան մեխանիզմների կիրառման գործընթացը: Համագործակցությունը հիմնականում ուղղորդվելու է Եվրամիության հատուկ ծրագրերի (TWINNING, TAIEX) կամ

տեխնիկական օժանդակության այլ միջոցներով անմիջական օժանդակության ստացման գործընթացին, որի հիմնական նպատակը և առաջնայնություններն են.

- ուսումնասիրել լիակատար թափանցիկության հաստատման հնարավորությունը Հայաստանում տրվող պետական օժանդակության ոլորտում,
- ընդլայնել Հանձնաժողովի վարչական կարողությունները և անկախությունը, ապահովել պատշաճ իրավական լիազորություններ, ներառյալ տեղում ստուգումներ անցկացնելու իրավունքը:

Հանձնաժողովը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող խնդիրների մասով շարունակելու է նաև համագործակցությունը Հայ-Եվրոպական քաղաքականության և իրավական խորհրդատվության կենտրոնի (AEPLAC) հետ, ինչպես նաև, ղեկավարվելով Գործընկերության և համագործակցության Համաձայնագրով հաստատված դրույթներով, կատարել Հանձնաժողովի իրավասության շրջանակներում ծառացած այլ պարտավորություններ:

Երկկողմ հարաբերություններում՝ Ուկրաինայի նախարարների խորհրդի և Հայաստանի կառավարության միջև մրցակցային քաղաքականության ոլորտում կնքված պայմանագրի շրջանակներում, Հանձնաժողովը ընդլայնելու է համագործակցությունը Ուկրաինայի հակամենաշնորհային կոմիտեի հետ, հատկապես մասնագետների վերապատրաստման և փորձի փոխանակման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա մասնակիցներին ծանոթանալու մրցակցության քաղաքականության կիրարկման գործող օրենսդրությանն ու մեխանիզմներին, ինչպես նաև իրականացվող ուսումնասիրությունների և վարույթների ընթացակարգերին:

Հանձնաժողովը սերտորեն համագործակցում է Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (USAID) հետ և վերջինիս կողմից ֆինանսավորվող «Առևտրային իրավունք և տնտեսական կարգավորում» ծրագրի (CLERP) շրջանակներում գործող Բերինգ Փոյնթ խորհրդատվական ընկերության հետ: Համանուն համագործակցությունը շարունակելու է.

- Հանձնաժողովի դերի և ինստիտուցիոնալ կարողությունների բարձրացմանը խթանման,
- հանրության իրազեկման աշխատանքներին և քարոզչության գործընթացին, նպաստելու,
- խորհրդատվություն տրամադրելու,
- փորձի փոխանակման, վերապատրաստման դասընթացներ իրականացնելուն աջակցելու և այլ ուղղություններով:

Ծրագրային տարում Հանձնաժողովն ընդլայնելու է նաև համագործակցությունը Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (OECD) և Մրցակցության հարցերով Բուդապեշտի տարածաշրջանային կենտրոնի (OECD RRC) հետ: Այս համագործակցությունը Հանձնաժողովին հնարավորություն կընձեռի իրազեկ լինելու նշյալ կազմակերպությունների կողմից տնտեսական մրցակցության քաղաքականության վերաբերյալ նախագծվող վերջին մոտեցումներին, մասնակցել դրանց քննարկմանը և ներկայացնել Հանձնաժողովի տեսակետները: Վերջիններիս հետ արդյունավետ և շահեկան

համագործակցության ձևերից է մրցակցության հիմնախնդիրներին առնչվող տարբեր թեմաներով սեմինարների կազմակերպումը և մասնակցությունը:

Ներկա փուլում Հանձնաժողովը շարունակում է բանակցել Համաշխարհային բանկի (WB) երևանյան գրասենյակի հետ՝ համատեղ ծրագիր իրականացնելու նպատակով: Համագործակցությունը հնարավորություն կտա զարգացնել տնտեսական մրցակցության քաղաքականության կիրարկման հետագա մեխանիզմները, ստեղծել արդյունավետ ինստիտուցիոնալ ենթակառուցվածք՝ հաշվի առնելով այն գործընթացները և խնդիրները, որոնք ծառացած են Հայաստանի առջև համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու համար:

Հանձնաժողովը Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (OSCE) հետ մշակել և նախագծել է համագործակցության նախնական ուղղությունները: Ծրագրային տարում նախատեսվում է ակտիվորեն շարունակել բանակցություններն ու քննարկումները և վերջանական համաձայնության գալ հետագա համագործակցության ուղղությունների և ծրագրային գործառույթների ավարտական դրույթների հաստատման ու իրագործման գործում:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում միջազգային փորձի ուսումնասիրումը և այդ առումով 2008 թվականին նույնպես կշարունակի իր մասնագետների ուսուցման և վերապատրաստման գործընթացները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և արտերկրի համանման կառույցների կողմից տեղի ունեցող վերջին զարգացումների և լավագույն փորձի իրազեկման գործընթացը, մասնավորապես, շարունակելու է համագործակցել ԵՄ մրցակցության հարցերով գլխավոր տնօրինության հետ՝ Հանձնաժողովի գործունեության ընթացքում ծագած հրատապ խնդիրների շուրջ ԵՄ անդամ երկրների համանման կառույցների կողմից ընդունված որոշումների և ուսումնասիրված գործերի ներկայացման ու տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև հնարավոր օժանդակության նպատակով: